

Վիճակագրական արտադրանք – Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ամսական)

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
<i>Կարիքների ձևակերպում</i>		Տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) վերաբերյալ տվյալներն ունեն օգտագործողների լայն շրջանակ: Հիմնական օգտագործողների թվում են երկրի տնտեսական քաղաքականության և տնտեսական կանխատեսման գործառույթներ իրականացնող պետական մարմինները, ինչպես նաև այլ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, գիտակրթական, ֆինանսավարկային կազմակերպությունները, գործարար միջավայրը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն՝ վերլուծությունների, մոդելավորման և կանխատեսումների նպատակներով:
	1.1 Կարիքների բացահայտում	ՏԱՑ-ը հաշվարկվում է հիմնականում Արմատատի կողմից իրականացվող պաշտոնական վիճակագրական դիտարկումների, ինչպես նաև վարչական ռեգիստրներից ստացվող դիսկրետ ամսական տվյալների հիման վրա՝ կիրառելով նախորդ տարվա միջին տարեկան գները: Տնտեսական գործունեության տեսակների իրական ծավալի հաշվարկված ինդեքսներն ագրեգացվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարվա տարեկան ՀՆԱ-ում (առանց արտադրանքի գուտ հարկերի և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների՝ ՖՄԱԶՕ) այդ գործունեության տեսակների ունեցած կշիռները:
	1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն, առաջնորդվելով Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի և Եվրամիության (այդ թվում՝ Եվրոստատի) փորձագետների կողմից տրված խորհրդատվությամբ, սկսած 2011թ. հունվարից դադարեցրեց ՀՆԱ ամսական ցուցանիշի հաշվարկը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ արդեն իսկ ԱՊՀ անդամ մի շարք երկրներ ևս (Ռուսաստան, Ուկրաինա, Ղազախստան, Մոլդովա) անցում էին կատարել ՀՆԱ-ի ամփոփման և հրապարակման Եվրամիության փորձառությանը և հրաժարվել էին ամսական (աճողական հենքով հավաքվող և հաշվառվող) ՀՆԱ-ի ամփոփման ԱՊՀ անդամ երկրների համար ԱՊՀ հիմնադրման պահից սահմանված պրակտիկայից:
	1.3 Արտադրանքի նպատակների	Որպես տնտեսությունը բնութագրող ամսական ամփոփ ցուցանիշ, Հայաստանում 2011թ. հունվարից հաշվարկվում և

	սահմանում	հրապարակվում է ՏԱՑ-ը՝ զուտ ամսվա կտրվածքով և ամսական պարբերականությամբ:
	1.4 Հասկացությունների որոշում	Ցուցանիշների ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է որպես տնտեսությունը բնութագրող ամսական ամփոփ ցուցանիշ:
	1.5 Տվյալների առկայության ստուգում	ՏԱՑ-ը հաշվարկվում է հիմնականում Արմատատի կողմից իրականացվող պաշտոնական վիճակագրական դիտարկումների, ինչպես նաև վարչական ռեգիստրներից ստացվող դիսկրետ ամսական տվյալների հիման վրա՝ կիրառելով նախորդ տարվա միջին տարեկան գները: Տնտեսական գործունեության տեսակների իրական ծավալի հաշվարկված ինդեքսներն ագրեգացվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարվա տարեկան ՀՆԱ-ում (առանց արտադրանքի զուտ հարկերի և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների՝ ՖՄԱԶԾ) այդ գործունեության տեսակների ունեցած կշիռները:
	1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում	
<i>Նախագծում</i>		
	2.1 Արդյունքների նախագծում	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
	2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում	
	2.3 Տվյալների հավաքման նախագծում	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
	2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում	ՏԱՑ-ն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տնտեսությունը և ամփոփում է ՏԳՏՀԴ-ի բաժինների մակարդակով տնտեսական գործունեության բոլոր տեսակները: Ընդգրկվում են ԱՀՀ-2008-ում սահմանված բոլոր գործառնությունները: Կիրառելով նախորդ տարվա միջին տարեկան գները կազմվում է հաշվետու ամսվա ՏԱՑ-ը՝ նախորդ ամսվա նկատմամբ և նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, ինչպես նաև, ժամանակագրական շարքերի շղթայակապ ինդեքսները, որոնք հնարավորություն են տալիս հարաբերել ինչպես ցանկացած ամսվա ցուցանիշները, այնպես էլ ստանալ մեկից ավել ամիսների ցանկացած կտրվածքով

		Ժամանակահատվածների հարաբերությունը բնութագրող ինդեքսներ:
	2.5 Մշակման և վերլուծության նախագծում	Տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշներն ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացվում են համապատասխան ճշգրտումներ նաև կապ հաստատելու միջոցով:
	2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում	Տեղեկատվության հավաքումից մինչև դրա հրապարակումն իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես, կապված ռեսպոնդենտներին համապատասխան իրազեկումներով ապահովելու, աշխատակիցներին անհրաժեշտ մասնագիտական դասընթացների միջոցով վերապատրաստելու և այլնի հետ:
<i>Կառուցում</i>		
	3.1 Հավաքման գործիքի կառուցում	Տեղեկատվության հավաքման իրականացման և դրա համար անհրաժեշտ «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
	3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային փաթեթում առկա է մուտքագրված տվյալների թվաբանական ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ՝ հանրագումարների, տրամաբանական կապերի, համապատասխանության և այլ ավտոմատ ստուգումների համակարգեր:
	3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ ամսական պարբերականությամբ՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի:
	3.4 Գործընթացների կարգավորում	Վիճակագրական արտադրանքի ստացումը իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝ <ol style="list-style-type: none"> 1. տեղեկատվության հավաքում, 2. թվաբանական և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ, 3. ստացված ամփոփ տեղեկատվության համեմատում համապատասխան դինամիկ շարքերի հետ, 4. տեղեկատվության տարածում՝ ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով տեղեկատվական զեկույցներում, ինչպես նաև տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում պաշտոնական պատասխան գրությունների միջոցով:
	3.5 Արտադրության համակարգի	-

	փորձարկում	
	3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում	-
	3.7 Արտադրության համակարգի վերջնականացում	Ամփոփվում են տեղեկատվություն ներկայացնողների հետ ցուցանիշների վերաբերյալ աշխատանքային քննարկումների արդյունքում ձեռք բերված համաձայնությունները:
<i>Հավաքում</i>		
	4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում	SUS-ը երկրի տնտեսությունում արտադրանքի թողարկման իրական ծավալի փոփոխության ամսական ագրեգացված ցուցանիշ է: Ամսական SUS-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը: Յուրաքանչյուր ամսվա համար այն իրենից ներկայացնում է ամբողջ տնտեսության համար մեկ ագրեգացված ցուցանիշ՝ ինդեքսի տեսքով: SUS-ի վերաբերյալ առկա են հետևյալ տվյալները՝ ա) SUS-ի շրթայակապ ինդեքսները նախորդող երկրորդ տարվա միջինի նկատմամբ, բ) SUS-ը՝ նախորդ ամսվա նկատմամբ, գ) SUS-ը՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, դ) SUS-ը՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, աճողական:
	4.2 Հավաքման կազմակերպում	-
	4.3 Հավաքման իրականացում	-
	4.4 Հավաքման վերջնականացում	Հավաքված տեղեկատվությունը թվաբանական և տրամաբանական ստուգաճշտման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումը իրականացվում է ինչպես մեխանիկական, այնպես էլ տեղեկատվությունը էլեկտրոնային միջավայր անմիջապես ներածելու եղանակով:
<i>Մշակում</i>		
	5.1 Տվյալների ինտեգրում	-
	5.2 Դասակարգում և կողմավորում	-
	5.3 Վերանայում և հաստատում	Իրականացվում է թերի կամ աղավաղումներով ներկայացված տեղեկատվության ստուգաճշտում, ինչպես նաև ոչ ճիշտ տեղեկատվության համապատասխանեցում:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	-
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	Գնահատումներ և լրահաշվարկներ այլ ցուցանիշների հաշվարկման համար առկա չեն:
	5.6 Կշիռների հաշվարկում	Լրացուցիչ կշիռների հաշվարկման անհրաժեշտություն չի առաջանում:

	5.7 Ագրեգատների հաշվարկում	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ամփոփ տվյալների ստացում ըստ առանձին վիճակագրական ցուցանիշների՝ նախապես մշակված համակարգչային ծրագրի միջոցով:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Հաճախ, ելնելով օպերատիվ վիճակագրական տվյալների ստացման անհրաժեշտությունից, նախնական տեղեկատվության հիման վրա կատարվում է նախնական ցուցանիշների հաշվարկ, որոնք հետագայում ենթակա են ճշգրտման:
	<i>Վերլուծություն</i>	
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	-
	6.2 Արդյունքների վավերացում	SUՑ-ի ամբողջական գնահատականները վերանայվում են համաձայն տարեկան ՀՆԱ-ի վերանայման ժամանակացույցի՝ յուրաքանչյուր տարին մեկ անգամ: Վերանայման հիմքը տարեկան ՀՆԱ-ի ցուցանիշների կշիռների փոփոխությունն է: Հաշվի առնելով, որ տարեկան ՀՆԱ-ի առաջին գնահատականները առկա են լինում տարվա ավարտից հետո 51/53-րդ օրը, իսկ արդեն սկսած 2013թ.-ից՝ 65/67-րդ օրը, ապա ընթացիկ տարվա առաջին երեք ամիսների համար SUՑ-ը հաշվարկվում է՝ հիմնվելով նախանցած տարվա (հաշվետու տվյալներով գնահատված տարվա) ՀՆԱ-ի կշիռների վրա, որոնք հետագայում վերանայվում են նախորդ տարվա ՀՆԱ-ի կշիռներով, երբ այդ վերանայված գնահատականները հասանելի են լինում մայիսի 5-ին:
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով տնտեսությունում տեղի ունեցող տարաբնույթ երևույթների ազդեցությունը SUՑ-ի վրա:
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	SUՑ-ի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ներկայացվում է աղյուսակների տեսքով և պահպանվում էլեկտրոնային ձևաչափով:
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումը իրականացվում է SUՑ-ի վերաբերյալ ամփոփ ցուցանիշների վերլուծություն:
	<i>Տարածում</i>	
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Իրականացվում են հրապարակման ենթակա վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան աղյուսակների պատրաստում: Անհրաժեշտության դեպքում նաև փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվում համապատասխան ցուցանիշի հասկացություններում և մեթոդաբանական պարզաբանումներում:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման

		<p>ստանդարտներին:</p> <p>Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հայերեն, անգլերեն և/կամ ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի և վիճակագրական ժողովածուների միջոցով.</p> <p>Նորությունների թողարկում «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն)</p> <p>Ամսական հրապարակումներ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն):</p> <p>Տվյալների բազաներ</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p><i>Էլեկտրոնային տարբերակ՝</i></p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն, անգլերեն, հետևյալ հասցեով.</p> <p>http://www.armstat.am/file/doc/99496773.xls</p>
	<p>7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի: Վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության փոփոխման կամ ճշգրտումների կատարման դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները:</p>
	<p>7.4 Տարածման արտադրանքների խթանում</p>	<p>Տարածման արտադրանքների տրամադրում: Գործիքների օգտագործում օգտագործողների հետ հաղորդակցությունը կառավարելու համար: Կայքի, ֆեյսբուքի և այլ միջոցների օգտագործում:</p>
	<p>7.5 Օգտագործողների աջակցության կառավարում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից չհրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:</p>

<i>Գնահատում</i>		
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	<p>SUS-ը հաշվարկելիս տնտեսական գործունեության տեսակների իրական ծավալների ամսական ինդեքսները կշռվում են նախորդ տարվա տարեկան ՀՆԱ-ում (առանց արտադրանքի զուտ հարկերի և ՖՄԱԶԾ) այդ գործունեության տեսակների ունեցած կշիռներով, որոնք արդեն իսկ ընդգրկում են չդիտարկվող տնտեսության, այդ թվում նաև «սովերային» տնտեսության (առանց անօրինական գործունեության) գնահատականները:</p>
	8.2 Գնահատման իրականացում	<p>SUS-ի տվյալների հնարավոր անճշտությունը կապված է տարբեր աղբյուրներից ստացվող ամսական դիսկրետ տվյալների անճշտության հետ:</p>
	8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում	<p>Եռամսյակային կտրվածքով SUS-ի միտումները համադրվում են եռամսյակային ազգային հաշիվների թողարկման ցուցանիշի միտումների հետ:</p>